



ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամենը, ինչ պետք է իմանալ Հայաստանի
Հանրապետություն տեղափոխվելիս



Պատրաստված է
Սփյուռքի գործերի գլխավոր
հանձնակատարի գրասենյակի և
Repatriation Armenia հիմնադրամի կողմից





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒԹԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՆՏԵԳՐԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**Repat
Armenia** 

**Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր
հանձնակատարի գրասենյակ**

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

2025



ՍԻՐԵԼԻ՝ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ,

Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը սիրով ողջունում է Ձեզ և պատրաստ է լինել Ձեր գործընկերը հայրենադարձության իրագործման գործընթացում:

Հայրենադարձությունը որպես առաջնահերթություն դիտարկելով և գործընթացն առավել սահուն և անխոչընդոտ դարձնելու նպատակով՝ 2023 թվականին գրասենյակի կողմից հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը:

Աներկբա է, որ համայն հայության հայրենիքը և ինքնության պահպանման բնօրրանը Հայաստանի Հանրապետությունն է: Հայրենադարձվելու Ձեր պատրաստակամությունը և հայրենիքի հզորացմանն աջակցելու որոշումը կարևոր քայլեր են: Յուրաքանչյուր հայրենադարձ իր հետ բերում է նոր փորձ, աշխարհայացք, գիտելիք, դառնում Հայաստանի հասարակության մի մասնիկը, կիսում իրավունքներն ու պարտականությունները:

Հայրենադարձության այս ուղեցույցը նպատակ ունի ընդլայնելու ձեր գիտելիքները գործընթացի վերաբերյալ, պարունակում է տարաբնույթ գործնական տեղեկություններ և խորհուրդներ:

Դեպի հայրենիք ճանապարհին Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը Ձեր կողքին է մատուցելով մի շարք ծառայություններ:

Մենք Ձեզ սպասում ենք հայրենիքում և ասում՝ բարի գալուստ տուն:

Հարգանքով՝ *Զարեհ Մկրտչյան*

**ՄՓՅՈՒՌԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ՋԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ**

Բովանդակություն

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԽՈՍՔԸ _____	3
ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ _____	6
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ _____	7
REPAT ARMENIA ՀԻՄՆԱԴՐԱՄ _____	8
ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ _____	9
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ _____	10
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _____	13
ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ _____	14
ԳՐԱՆՅՄԱՆ ՀԱՍՑԵ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ _____	17
ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ _____	18
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ _____	20
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ _____	21
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	22
ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ _____	23
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ _____	24
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ _____	25
ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԶՋԱՅԻՆ ԿԱՊ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ _____	26
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ _____	27
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ _____	29
ԿԵՑՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ _____	30
ՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ _____	31
ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ _____	32

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը հիմնվել է 2019 թվականի հունիսի 11-ին: Գրասենյակը Հայաստան-սփյուռք հարաբերությունների ամրապնդման, խորացման, սփյուռքահայերին աջակցության տրամադրման և հայրենադարձության գործընթացի իրականացման, ինտեգրման ապահովման, համահայկական ներուժի քարտեզագրման, սփյուռքը հայաստանյան կյանքին ներգրավման ռազմավարության և քաղաքականության մշակման պատասխանատու մարմինն է:

Հայաստանի և սփյուռքի հզորությունն ու կենսունակությունը փոխկապակցված են, մեր նպատակներն ու քաղաքականությունը նպատակաուղղված են ընդհանուր հետաքրքրությունների առաջնումանը:

Գրասենյակը գործում է որպես կարևոր կամուրջ՝ նպատակ ունենալով համախմբել համահայկական ներուժը և սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներին լիովին ներգրավել հայրենիքի կյանքին:

Այդ ճանապարհին գրասենյակն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ ուղղված սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավմանը Հայաստանի պետական կառավարման համակարգում, երիտասարդների շրջանում հայ ինքնության պահպանմանը և նրանց ակտիվ մասնակցությանը համայնքային կյանքին, Սփյուռք-հայրենիք կապի ամրապնդմանը, սփյուռքի ներուժի քարտեզագրմանը, կազմակերպում է համահայկական նշանակության համաժողովներ և գազաթնաժողովներ:

Գրասենյակի կարևորագույն ձեռքբերումներից մեկը Հայաստանի Հանրապետության պատմության մեջ Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնի հիմնումն է:



Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը հանդիսանում է միասնական ռեսուրս-կենտրոն հայրենադարձների համար՝ աջակցելով նրանց դեպի հայրենիք տեղափոխությանն առնչվող բոլոր հարցերում: Այն ստեղծվել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից՝ Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Կենտրոնի նպատակն է խթանել հայրենադարձությունը, աջակցել հայրենադարձների արդյունավետ ինտեգրման գործընթացին և ակտիվ ներգրավմանը Հայաստանի Հանրապետության հասարակական, մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքին:

Կենտրոնի ծառայությունները

Հայաստան տեղափոխվելու մտադրություն ունեցող, տեղափոխման գործընթացքում գտնվող կամ արդեն իսկ Հայաստանում հաստատված հայրենադարձին կենտրոնը տրամադրում է խորհրդատվություն և գործնական աջակցություն հետևյալ ուղղություններով՝

- ՀՀ քաղաքացիության և կացության կարգավիճակի ձեռքբերում
- Անձնական գույքի տեղափոխություն
- Առողջապահություն
- Կրթություն
- Սոցիալական հարցեր
- Ջրաղվածություն և աշխատանքի թույլտվություն
- Ջինվորական հաշվառում
- Իրավական ոլորտի հարցեր
- Բիզնեսի հիմնում:

Կենտրոնն առաջարկում է.

- Հայրենի անվճար դասընթացներ
- Ոլորտային անվճար սեմինար-դասընթացներ
- Տեղեկատվական և կապերի հաստատման հանդիպումներ:

Repat Armenia հիմնադրամը ոչ պետական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2012 թվականի օգոստոսին՝ ակտիվ հայրենադարձության գաղափարը նոր մակարդակի բարձրացնելու նպատակով: Հիմնադրամն ունի թիմ՝ տեղակայված Երևանում, ինչպես նաև աջակիցներ ողջ աշխարհում:

Հիմնադրամի ծառայությունները ներառում են՝

- Տեղեկատվական աջակցություն Հայաստանում ապրելու և ինտեգրվելու խորհուրդներով՝ ներառյալ հայրենադարձներից պատմություններ ու հուշումներ, որոնք կարելի է գտնել նաև մեր կայքում և սոցիալական ցանցերում,
- Առցանց և անցանց խորհրդատվություններ՝ ինտեգրման, աշխատանքի, բիզնեսի հիմնման, կապերի ստեղծման, կրթության, առողջապահության և իրավական հարցերի շուրջ,
- Աշխատանքի աջակցություն՝ անհատական խորհրդատվություն, ինքնակենսագրականի (CV) վերլուծություն և մուտք staff.am/repat աշխատատեղերի բացառիկ հարթակ,
- Ինտեգրացիոն միջոցառումներ, հաջողակ կազմակերպությունների հետ հանդիպումներ, խմբային շրջայցեր,
- Առողջապահական ապահովագրության ընդգրկումն փաթեթ,
- Անվճար հայրեն լեզվի դասընթացներ:

Ամեն տարի ավելի քան 800 մարդ Ռուսաստանից, Լիբանանից, ԱՄՆ-ից, Իրանից, Սիրիայից, Կանադայից, Ֆրանսիայից և այլ երկրներից դիմում է Repat Armenia հիմնադրամին՝ վերադառնալու և ինտեգրվելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

Հայրենադարձության գործընթացի նախապատրաստում`



- Ծրագրեր փորձնական ուղևորություն Հայաստան
- Նախապատրաստեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը
- ՀՀ քաղաքացիության կամ մշտական/ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար գրանցվեք առցանց` migration.e-gov.am,
- Ծանոթացեք անձնական իրերը Հայաստան տեղափոխելու կանոններին և ընթացակարգին,
- Սովորեք հայերեն կամ կատարելագործեք ձեր գիտելիքները:

Տեղափոխության ամենակարևոր կողմերից մեկը փաստաթղթերի առկայությունն է (բնօրինակներ, ապոստիլով և նոտարական կարգով վավերացված թարգմանություններ): Ստորև ներկայացված է Հայաստանում իրավական կարգավիճակ ստանալու, դպրոցում գրանցվելու և այլ նպատակներով անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը

- Ծննդյան վկայական (ընտանիքի բոլոր անդամների համար),
- Անձնագիր,
- Մկրտության վկայական,
- Ամուսնության վկայական,
- Կրթության վկայական,
- Պատվաստումներ և բժշկական փաստաթղթեր,
- Վարորդական իրավունքի վկայական,
- Անշարժ և շարժական գույքի սեփականության իրավունքի, տեղափոխությանը վերաբերող փաստաթղթեր:

Խորհուրդ: Համոզվեք, որ Ձեր տվյալները նույնական են բոլոր փաստաթղթերում և դրանց թարգմանություններում: Եթե փոխել եք Ձեր անունը և/կամ ազգանունը, համոզվեք, որ կարող եք տրամադրել ազգանվան և/կամ անվան փոփոխությունը հաստատող բոլոր փաստաթղթերը և դրանց նոտարական թարգմանությունները:

Նշում: Այս փաստաթղթերը պետք է լինեն թարգմանված, նոտարական կարգով վավերացված կամ այն երկրում, որտեղից ժամանում եք, կամ Հայաստանում: Որոշ փաստաթղթեր, ինչպիսիք են ծննդյան, ամուսնության, մկրտության և սեփականության վկայականները, պետք է վավերացված լինեն ապոստիլով այն երկրում, որտեղից ժամանում եք: Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և հյուպատոսությունների մեծամասնությունը տրամադրում են նոտարական և թարգմանչական ծառայություններ: Ապոստիլը հաստատում է տվյալ փաստաթղթի, փաստաթուղթը ստորագրած անձի պաշտոնի, ստորագրության, այդ փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը:

Իրավական կարգավիճակի տեսակները Հայաստանում

Դուք կարող եք դիմել ՀՀ քաղաքացիություն, ինչպես նաև ՀՀ մշտական, ժամանակավոր կամ հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար: Ձեր ընտրած կարգավիճակը որոշելու է ձեր արտոնությունների և պարտականությունների շրջանակը, ինչպիսիք են՝ ընտրական իրավունքը կամ ՀՀ զինված ուժերում ծառայությունը, հող ձեռք բերելու, անվճար բժշկական օգնության իրավունքները և այլն:

Կապվեք Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի հետ՝ խորհրդատվության և Ձեր հայրենադարձության ընթացքը կազմակերպելու համար:

ՔԱՂԱՔԱՏԻՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը

Գոյություն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու չորս տարբերակ՝ ըստ ազգության, ՀՀ քաղաքացու հետ ամուսնության, ՀՀ քաղաքացու ծնող կամ զավակ լինելու և բացառիկության կարգով: Խորհուրդ ենք տալիս քաղաքացիություն ստանալու համար դիմել մինչև Ձեր Հայաստան տեղափոխությունը, քանի որ այդ գործընթացը կարող է տևել 3-6 ամիս, իսկ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության դեպքում՝ ավելի երկար:

Փաստաթղթերի ներկայացման համար գրանցվում է իրականացվում է բացառապես առցանց՝ migration.e-gov.am:

Քայլ 1. Պատրաստեք փաստաթղթերը

Ազգությամբ հայերը կարող են դիմել Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար ազգության հիմքով:

Ազգության հիմքով ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմելիս անհրաժեշտ է ներկայացնել՝

- Անձնագիր և պատճենը՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ,
- 35x45 մմ չափսի վեց գունավոր լուսանկար,
- Ծննդյան վկայականի (ապոստիլով) նոտարական կարգով վավերացված թարգմանություն (ԱՊՀ երկրների քաղաքացիների համար ապոստիլ չի պահանջվում),
- Մկրտության վկայական (ազգությամբ հայ լինելու մասին փաստի նշումով) կամ ազգությամբ հայ լինելը հաստատող այլ պաշտոնական փաստաթուղթ,

- Ծնողների անձնագրերը և պատճենները՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ,
- Ամուսնության վկայականը (ապոստիլով) և պատճենը՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ (ԱՊՀ երկրների քաղաքացիների համար ապոստիլ չի պահանջվում),
- Ամուսնու անձնագիրը կամ քաղաքացիությունը հաստատող վկայականը և պատճենը՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ,
- Երեխայի ծննդյան վկայականը և պատճենը, ինչպես նաև նոտարական կարգով վավերացված թարգմանություն (ԱՊՀ երկրների քաղաքացիների համար ապոստիլ չի պահանջվում):

Ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթղթերն են՝ մկրտության վկայականը, որը ցույց է տալիս Ձեր հայկական ազգությունը/ծագումը, Ձեր ծնողների ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության կամ նախկին Հայկական ԽՍՀ-ի կողմից տրված անձնագիրը կամ օտարերկրյա պետության կողմից տրված փաստաթուղթը, որը ցույց է տալիս Ձեր ծնողների կամ տատիկների և պապիկների էթնիկ պատկանելությունը:

Նշում: Մկրտության վկայականը պարտադիր վավերացման կարիք ունի այն երկրի ՀՀ դեսպանատան կամ հյուպատոսական մարմնի կողմից, որտեղ այն տրվել է:

Անձը, ում ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, և ով օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է ՀՀ քաղաքացիություն ստանալ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16.11.2023 փոփոխությամբ:



Մանրամասների համար սկանավորեք QR կոդը՝

Եթե դուք ազգությամբ հայ չեք կամ չունեք Ձեր ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթեր, ապա կարող եք դառնալ ՀՀ քաղաքացի միայն 3 տարի Հայաստանում մշտապես բնակվելուց, հայոց լեզվի և ՀՀ Սահմանադրության իմացության քննություն հանձնելուց հետո:

Քայլ 2. Դիմել քաղաքացիություն ստանալու համար

Քաղաքացիության դիմումները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (հայտնի է որպես ՕՎԽԲ): Դիմումը կարող եք լրացնել նաև արտերկրում ՀՀ դեսպանատներում կամ գլխավոր հյուպատոսություններում:

Քայլ 3. Հետևեք ձեր դիմումի կարգավիճակին

ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը սովորաբար քննարկվում է 90 աշխատանքային օրվա ընթացքում: Նախքան ՀՀ Նախագահի կողմից քաղաքացիության մասին հրամանագրի ստորագրումը, այն ուսումնասիրվում է ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ քաղաքացիության հանձնաժողովի կողմից: Դիմումի ձևը լրացնելուց անմիջապես հետո Դուք ստանում եք վեցանիշ կոդ, որի միջոցով կարող եք հետևել գործընթացին առցանց՝ www.police.am հարթակում:

Քայլ 4. Անցեք երդման արարողությունը և ստացեք ձեր անձնագիրը

ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո Դուք կարող եք վերցնել Ձեր անձնագիրը Հայաստանում կամ ՀՀ դեսպանատանը/ՀՀ գլխավոր հյուպատոսությունում, որտեղ Դուք ներկայացրել եք դիմումը: Եթե Դուք գտնվում եք Հայաստանում, ապա Ձեզ հարկավոր է հերթագրվել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության էլեկտրոնային հարթակում առաջին անգամ ՀՀ քաղաքացիություն ստացած անձի անձնագրավորման համար: Անձնագիր ստանալու համար տրված դիմումից հետո Ձեզ կտրամադրվի տեղեկատվություն անձնագրի ստացման օրվա և ժամի, ՀՀ քաղաքացու երդման տեքստի ստորագրման վերաբերյալ:

Նշում: Այս փուլում Դուք կարող եք նաև գրանցվել ձեր բնակության հասցեում: Եթե ցանկանում եք գրանցվել հայաստանյան հասցեում, ապա պարտավոր եք ներկայացնել Հայաստանում որևէ հասցեում բնակվելու ապացույց (օրինակ՝ գույքի սեփականության վկայական, վարձակալության պայմանագիր կամ ստանալ գույքի սեփականատիրոջ համաձայնությունը և այլն: Տե՛ս «Հասցեի գրանցում» բաժինը): Դրա համար անհրաժեշտ է անձնագրով ներկայանալ ՀՀ ոստիկանության տարածքային վարչություն: Այս գործընթացը կարող է տևել մինչև 10 օր:



Զինվորական ծառայությունը պարտադիր է 18 տարեկանից բարձր արական սեռի ՀՀ քաղաքացիների համար: Ծառայության տևողությունը երկու տարի է: Հայաստանի Հանրապետության 18-50 տարեկան քաղաքացիները պարտավոր են հաշվառված լինել զինվորական պահեստազորում և կարող են զորակոչվել ծառայության գորահավաքի հայտարարման դեպքում:

ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալուց առաջ անհրաժեշտ է հաշվառվել հանրապետական տարածքային զինվորական կոմիսարիատում:

Պահեստազորում հաշվառվածները բաժանվում են շարքային, ենթասպայական և պահեստազորի սպաների, որոնց պահեստազորում ծառայության ժամկետները կարող են հասնել մինչև վերջիններիս 58 տարեկանը լրանալը:

ՀՀ քաղաքացիություն շնորհելու մասին հաստատումը ստանալուց հետո անհրաժեշտ է՝

1. Այցելել ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (ՕՎԻՐ)՝ անձնագրավորման համար: Հարկ է տեղում լրացնել ՀՀ անձնագրի ստացման դիմում՝ նախապես գրանցվելով էլեկտրոնային հարթակում:

Գրանցվելու համար սկանավորեք QR կոդը՝



2. Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը տրամադրում է զինկոմիսարիատում հաշվառման/գրանցման ուղեգիր,

3. Եթե ունեք զինվորական գրքույկ ցանկալի է այն ունենալ Ձեզ հետ՝ զինկոմիսարիատում Ձեր անունով հաշվառման քարտ բացելու համար,

4. Ավարտել գրանցումը զինկոմիսարիատում և հաշվառման/գրանցման փաստը հաստատող թերթիկը տանել Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ապա ստանալ Ձեր անձնագիրը:

5. Անհրաժեշտության դեպքում Զինկոմիսարիատում Ձեզ կտրամադրեն բժշկական հետազոտությունների թերթիկ, որով Դուք պետք է անցնեք բուժզննում:

Այս գործընթացը սովորաբար տևում է մի քանի օր:

ՀՀ ՊՆ զորակոչային և գորահավաքային համալրման ծառայություն հասցեն է.

 ք. Երևան, Բաբայան 6,  հեռ. 010 201 568:

Նշում: 2024 թվականի փետրվարի 12-ից ուժի մեջ են մտել "Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին" ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, որոնց համաձայն պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև ՀՀ քաղաքացիություն ստացած 27-37 տարեկան արական սեռի անձինք: Նրանք, ովքեր մինչև ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելը այլ երկրի զինված ուժերում ծառայել են առնվազն 1 տարի կամ անցել են 1,5 տարի այլընտրանքային ծառայություն, ազատվում են ՀՀ զինված ուժերում ծառայությունից:

Մանրամասների համար սկանավորեք QR կոդը`



ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ՀՀ-ում կացության կարգավիճակը թույլ է տալիս բնակվել, սովորել, աշխատել, բիզնես գրանցել Հայաստանում: ՀՀ-ում գոյություն ունի կացության կարգավիճակի 3 տեսակ`

- **Ժամանակավոր** կացության կարգավիճակ, որը տրվում է 1 տարի ժամկետով` տարեկան երկարաձգման հնարավորությամբ,
- **Մշտական** կացության կարգավիճակ, որը տրվում է 5 տարի ժամկետով` յուրաքանչյուր 5 տարին մեկ երկարաձգելու հնարավորությամբ,
- **Հատուկ** կացության կարգավիճակ, որը տրվում է անձնագրի տեսքով` 10 տարի վավերականության ժամկետով` յուրաքանչյուր 10 տարին մեկ երկարաձգելու հնարավորությամբ:

Ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակ ստանալու դիմումները դիտարկվում են ավելի արագ, քան քաղաքացիություն ստանալու դիմումները և տևում են 1-2 ամիս:

Ազգության հիմքով **մշտական կացության** կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն են`

1. Դիմում,
2. Դիմում-հարցաթերթիկ,
3. 35x45 մմ չափսի երեք գունավոր լուսանկար,
4. Անձնագիր, անձնագրի պատճեն և անձնագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանություն,
5. Առողջական վիճակի մասին տեղեկանք,

- 6.** Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ՝ մուտքի վիզա, կացության կարգավիճակի քարտ, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, սահմանային հսկողության մարմինների կողմից անձի՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու մասին փաստաթղթում կատարված նշում,
- 7.** Անչափահասի դեպքում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձնագիրը և ազգակցական կապը հաստատող փաստաթուղթը,
- 8.** Հավատարմագրային կառավարչի դեպքում՝ լիազորագիր և հավատարմագրային կառավարչի անձնագիր,
- 9.** Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու (երկարաձգելու) փաստը հաստատող փաստաթղթեր:

Ա. Ազգությամբ հայերը ներկայացնում են ազգությունը հաստատող փաստաթղթերից մեկը (օրինակ՝ անձնագիրը, ծննդյան վկայական կամ մկրտության վկայական, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության դեսպանության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից),

Բ. Ձ ե ռ ն ա ր կ ա տ ի ր ա կ ան / բ ի զ զ ե ս գ ո թ ծ ո ն ն ե ու թ յ ա ն դ ե պ ք ու մ՝ ձեռնարկատիրական գործունեությունը հաստատող փաստաթղթերը,

Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ հատուկ, մշտական կամ ժամանակավոր կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգական լինելու դեպքում՝ ընտանեկան կապը հավաստող փաստաթուղթ, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր, Հայաստանի Հանրապետության տարածքում առնվազն երեք տարի բնակվելը հավաստող փաստաթուղթ:

- Պետական տուրքի վճարման անդորրագիր (մինչև 18 տարեկան անձանց դեպքում տուրք չի գանձվում)

Հատուկ կացության կարգավիճակ (Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր) ստանալու համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում,
- Դիմում-հարցաթերթ,
- Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մուտքի վիզա, կացության կարգավիճակի քարտ, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, սահմանային հսկողության մարմինների կողմից անձի՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու մասին փաստաթղթում կատարված նշում,
- Ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթերից մեկը՝

Ա. Եկեղեցական կառույցների կողմից տրված մկրտության վկայական՝ հաստատված Հայաստանի Հանրապետության դեսպանության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից՝ մկրտվող անձի կամ նրա ծնողի հայ լինելու մասին նշումով,

Բ. օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված՝ ապոստիլով կամ հյուպատոսական վիզայով հաստատված ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթուղթ,

9. ազգությամբ հայ լինելը հավաստող այլ փաստաթուղթ՝ հաստատված դեսպանության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից,

7. Ծնողի (պապի, տատի, հարազատ եղբոր կամ քրոջ) ծննդյան վկայականը կամ անձը հաստատող փաստաթուղթը, որում առկա է նշում ազգությամբ հայ լինելու վերաբերյալ: Համամայր կամ համահայր եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթ անձի համար կարող է հանդիսանալ ազգությունը հաստատող փաստաթուղթ, եթե եղբոր կամ քրոջ ազգությամբ հայ լինելը պայմանավորված է նրանց համատեղ ծնողի ազգությամբ:

Սույն կետի «դ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի հետ ներկայացվում է նաև տվյալ անձի ազգակցական կապը հիմնավորող իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթուղթ:

Ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթեր են ծննդյան վկայականը և էթնիկ պատկանելության սյունակ պարունակող անձնագիրը՝

- անձնագիր կամ արտերկիր մեկնելու փաստաթուղթ և դրա նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանություն,
- 3. 5x4. 5 սմ չափսի վեց գունավոր լուսանկար,
- պետական տուրքի վճարման անդորրագիր:

* Դուք պետք է անցնեք հետազոտություն և ստանաք առողջական վիճակի մասին բժշկական տեղեկանք, որը պետք է ներկայացնել կացության կարգավիճակի դիմումի հետ միասին: Հետազոտությունը կարող է իրականացվել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կլինիկաներում:

* Կացության կարգավիճակի փաստաթղթերի ստացման համար պետական վճարի չափը և գործողության ժամկետները կարող են փոփոխվել:

Նշում: Ազգային պատկանելությունը հաստատող փաստաթուղթը, օրինակ՝ մկրտության վկայականը, պետք է վավերացվի այն երկրի Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կամ գլխավոր հյուպատոսությունում, որտեղ տրվել է: Մկրտության վկայականում պետք է հստակ նշվի, որ Դուք ազգությամբ հայ եք:



Գրանցման հասցե

Օրենքի պահանջ է, որ ՀՀ քաղաքացիները և ռեզիդենտները գրանցեն իրենց բնակության հասցեն տարածքային ոստիկանական բաժանմունքում: Բնակության հասցեում հաշվառվելիս/գրանցվելիս անհրաժեշտ կլինի ներկայացնել Հայաստանում գույքի սեփականության վկայական, բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր կամ բնակտարածքի սեփականատիրոջ համաձայնությունը: Տեղամասային ոստիկանությունը կիրականացնի ստուգում, որը, սովորաբար, տևում է մինչև երկու շաբաթ և կհաստատի, որ Դուք բնակվում եք նախապես նշված հասցեում: Գործընթացի համար պետական վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ: Եթե մինչ անձնագրի ստացումը Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում (ՕՎԻՐ) Դուք չեք հաշվառվել Ձեր բնակության հասցեում, ապա կարող եք հաշվառվել Ձեր տարածքային ոստիկանության բաժանմունքում:

Հանրային ծառայության համարանիշ

Հանրային ծառայության համարանիշը անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիների կենսական ու սոցիալական գործընթացների համար: Այն ունի եզակի հերթական համար և անհրաժեշտ է աշխատանքի տեղավորման, աղքատության և գործազրկության նպաստների, ծերության և հաշմանդամության կենսաթոշակների, ինչպես նաև բանկային հաշիվ բացելու, հարկեր վճարելու և այլնի համար:

Հանրային ծառայության համարանիշ ստանալու համար անհրաժեշտ է Ձեր անձնագիրը կամ կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը: Հարկ է դիմել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (ՕՎԻՐ):

Հանրային ծառայության համարանիշը անհրաժեշտ է.

- Քաղաքացուն աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ վճարելիս, քաղաքացուն սոցիալական ապահովության պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակներ, նպաստներ և փոխհատուցումներ նշանակելիս և վճարելիս,
- Հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները հաշվարկելիս և վճարելիս,
- Բանկային հաշիվ բացելիս,
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային իրավասության կազմակերպությունների տեղեկատվական բազաները վարելիս,
- Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նշում: Նույնականացման քարտը (ID քարտ) տրվում է ՀՀ քաղաքացու անձնագրի հիման վրա և ստանալու դեպքում այն կպարունակի Ձեր Հանրային ծառայությունների համարանիշը և անձնագրային տվյալները: Միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են ստանալ նույնականացման քարտ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ



Մշտական բնակության նպատակով Հայաստան տեղափոխվելիս Ձեր անձնական գույքն ու իրերը կարող եք ներմուծել անվճար, առանց տուրքերի և մաքսային վճարների:

Անձնական գույքի անվճար ներմուծման նպատակով պետք է բավարարեք մի շարք պայմանների, մասնավորապես՝ Հայաստանից պետք բացակայած լինեք վերջին 7 տարվա (2550 օրից) առնվազն 1280 օրը (շուրջ 3,5 տարի) և նախկինում օգտված չլինեք այս արտոնությունից:

Ձեր անձնական գույքն ու իրերը ներմուծելիս մաքսային արտոնություններ ստանալու համար Ձեր իրերը պետք է լինեն առանց գործարանային փաթեթավորման և մակնշման:

Առանց մաքսատուրքերի վճարման ներմուծվող անձնական իրերի ցանկը ներառում է.

- Կենցաղային տեխնիկա, յուրաքանչյուր տեսակից առավելագույնը երեք օրինակ (մասնավորապես՝ սառնարան, հեռուստացույց, օդորակիչ, համակարգիչ, լվացքի մեքենա և այլն), որոնք ունեն օգտագործման (գործածության) արտաքին նշաններ,
- Կահույք, յուրաքանչյուր տեսակի կահույքից մեկ լրակազմ, օգտագործված (մասնավորապես՝ ննջասենյակի, խոհանոցի և հյուրասենյակի կահույք),
- Անձնական օգտագործման մեկ ավտոտրանսպորտային միջոց, որը ձեռք է բերվել տեղափոխությունից առաջ և ՀՀ ներմուծելիս, անձի նախկին բնակության երկրում առնվազն վեց ամիս առաջ հաշվառված (գրանցված) է եղել տվյալ անձի անունով: Մինչև այդ մեքենայի՝ բնակության նախկին երկրում հաշվառումից հանելը, այն պետք է հանդիսացած լինի ՀՀ մշտական բնակության ժամանողի միանձնյա սեփականությունն ու առկա լինի դա հաստատող փաստաթուղթ: Ներմուծվող մեքենայի փաստաթղթերը պետք է ներկայացվեն ապոստիլով:
- Անձնական այլ իրեր (հագուստ, կենցաղային իրեր և անկողնային պարագաներ և այլն) կարելի է տեղափոխել առանց սահմանաչափի:

Նշում: Աշխատանքի/ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ապրանքները (օրինակ՝ սարք-սարքավորումները, գործիքները և այլն) չեն կարող ներմուծվել առանց մաքսային տուրքերի և վճարների:

Մաքսային պահեստներում գտնվող Ձեր անձնական ապրանքների զբաղեցրած տարածքի դիմաց Դուք պետք է վճարեք, իսկ ավտոմեքենայի մաքսային տարածքում գտնվելն անվճար է (Գյումրի քաղաքում):

Ձեր անձնական իրերը կարող են ներմուծվել առանց մաքսային պարտավորությունների Ձեր՝ ՀՀ ժամանումից հետո առավելագույնը 18 ամսվա ընթացքում:

Դուք պետք է ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության պետի անունով մաքսատուն ներկայացնեք դիմում ներմուծման հարկազատման վերաբերյալ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՀ ներմուծված անձնական, օգտագործված ապրանքների անվանման, քաշի և քանակի վերաբերյալ, ապրանքների տրանսպորտային փոխադրման փաստաթղթեր (նավային, ցամաքային բեռնագրեր, ոչ առևտրային հաշիվ-ապրանքագիր (ինվոյս) կամ մասնացուցակ, տարանցման հայտարարագիր, տեղափոխության վճարման անդորրագրի բնօրինակը),
- Հայաստանի Հանրապետությունում Ձեր մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթուղթը՝ անձնագիրը, մշտական կամ հատուկ կացության կարգավիճակի կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակը հաստատող ՀՀ կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը,
- Օտարերկրյա (ելքի) պետությունում մշտական բնակության փաստը հաստատող փաստաթուղթը (անձնագիր, կացության քարտ, այլ փաստաթուղթ՝ միջազգային վավերացմամբ (ապոստիլ) կամ ՀՀ հյուպատոսական վավերացմամբ),
- ՀՀ մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը՝ դիմում ներկայացնելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:
- Մաքսային մարմնի պահանջով դիմումատուն պարտավոր է ներկայացնել նաև օտարերկրյա պետությունների կողմից տրված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով (ապոստիլով և նոտարական վավերացմամբ) կատարված հայերեն թարգմանությունները:

Մաքսային մարմինը 3 շաբաթվա ընթացքում կբավարարի կամ կմերժի Ձեր դիմումը:

Մանրամասների համար այցելեք diaspora.gov.am կայքի «Անձնական գույքի տեղափոխում» բաժին:

ПРИМЕЧАНИЕ. Указанные цены могут меняться.

Դուք կարող եք նաև անմիջականորեն դիմել պետական լիազոր մարմնին՝

 ՀՀ ՊԵԿ, Մովսես Խորենացի փողոց, 3, 7  (+374) 60 544 444



secretariat@petekamutner.am

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնության և անհետաձգելի բուժօգնության ծառայությունները մատուցվում են բոլորին (ներառյալ օտարերկրացիներին): Առաջնային բուժօգնությունը տրամադրվում է անվճար մինչև 18 տարեկան բոլոր քաղաքացիներին և ռեզիդենտներին (ընթացակարգերի տեսակների որոշ սահմանափակումներով): Կան բազմաթիվ ծրագրեր նրանց համար, ովքեր կարիք ունեն ստանալու անհրաժեշտ բժշկական օգնություն:

Հիմնական բժշկական օգնություն ստանալու համար շատ մարդիկ նախընտրում են դիմել տարածքային պոլիկլինիկաներ կամ մասնավոր հիվանդանոցներ: Հանրային պոլիկլինիկաներում ծառայությունների մեծ մասը տրամադրվում է անվճար:

Բժշկական ծառայություն գրանցելու համար անհրաժեշտ է՝

1. Դիմել ֆիզիկապես ամենամոտ տարածքային պոլիկլինիկան,
2. Տրամադրել անձնագիր և հանրային ծառայությունների համարանիշ,
3. Պայմանագիր կնքել պոլիկլինիկայի հետ՝ դառնալով նրա շահառու:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ՀՀ առողջապահության նախարարություն.

 pr@moh.am  (+374 60) 808003 /2301

ՀՀ-ում գործում է Armed հավելվածը, որը գործում է ամբողջ երկրում: Էլեկտրոնային բժշկական գրառումների համակարգը հետևում է բժշկական կենտրոն Ձեր այցերին, հիվանդություններին և ախտորոշումներին, ինչպես նաև արձանագրում է պատվաստումների ամսաթվերը: Բջջային հավելվածը կարող եք ներբեռնել Ձեր հեռախոսում՝ armed.am:

Բժշկական ապահովագրություն

Հայաստանում անհատական հիմունքներով բժշկական ապահովագրությունը տարածված չէ, սակայն Ձեզ համար ավելի մատչելի և շահավետ կլինի ներառվել կորպորատիվ փաթեթում: Մատչելի առաջարկներ ապահովելու համար Repat Armenia հիմնադրամը համագործակցում է Նաիրի Ինշուրանսի հետ:

Առաջարկի արժեքը կազմում է տարեկան 130 000 դրամ (3 և ավելի անդամ ունեցող ընտանիքի համար արժեքը կկազմի 30 % ավելի էժան): Փաթեթը հոգում է Հայաստանում բժշկական ծառայությունների ծախսերը: Repat Armenia-ի առաջարկած փաթեթում ներառված ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու և գրանցվելու համար այցելեք repatarmenia.org կայք:

Նշում: Գները ենթակա են փոփոխման:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկրադաքացիների և կացության կարգավիճակ ունեցող անձանց համար պետական մանկապարտեզներն ու ընդհանուր միջնակարգ կրթությունն անվճար են Հայաստանում: Ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: Անգլերենը և ռուսերենը դասավանդվում են բոլոր պետական դպրոցներում: Որոշ դպրոցներ առաջարկում են նաև գերմաներեն, ֆրանսերեն և չինարեն լեզուների ուսուցում: Ընդունելության քննություններում բարձր գնահատականներ ստացած ուսանողների համար պետական քոլեջներն ու համալսարանները տրամադրում են անվճար տեղեր կամ ուսման վարձավճարի արտոնություններ:

Բացի պետական կրթական հաստատություններից, Հայաստանում կան բազմաթիվ մասնավոր մանկապարտեզներ, դպրոցներ և համալսարաններ, որոնք ունեն նաև օտար լեզուներով և միջազգային ծրագրերի հետ կապված ուսուցում: Մասնավոր հաստատություններում ուսումը վճարովի է, իսկ վարձի չափերը՝ տարբեր:

Ինչպե՞ս ընդունվել մանկապարտեզ

Անհրաժեշտ է Ձեր երեխային հերթագրել մանկապարտեզի համար՝ նրա 2 տարեկանը լրանալուց հետո: Երեխային մանկապարտեզ ընդունելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ուղղված տնօրենին,
2. երեխայի ծննդյան վկայականը և հանրային ծառայության համարանիշը կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի բնօրինակը և պատճենը,
3. լուսանկար՝ 3x4 չափի,
4. երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի քաղվածք,
5. երեխայի՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ վկայագիր,
6. ծնողի անձնագրի պատճենը՝ գրանցման էջով, իսկ նույնականացման քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի դեպքում՝ հաշվառման մասին տեղեկանք:

mankapartez.yerevan.am կայքը հնարավորություն է տալիս հերթագրվելու Ձեր երեխային Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզներում:

Ինչպես ընդունվել հանրակրթական դպրոց

Ձեր երեխային հանրակրթական դպրոց ընդունելու գործընթացը բավականին պարզ է: Առաջին դասարան ընդունվելու համար Դուք պետք է ընտրեք ուսումնական հաստատություն www.hayt.emis.am պորտալում, ունենաք երեխայի և ծնողի հանրային ծառայության համարանիշը, լրացնեք և ուղարկեք դիմում:

2-12-րդ դասարաններ ուսումնական հաստատությունում ընդունվելու համար անհրաժեշտ է դիմել համապատասխան դպրոց: Անհրաժեշտ է ունենալ հետևյալ փաստաթղթերը՝

1. Երեխայի ծննդյան վկայական կամ անձնագիր (պատճեններով),
2. Երեխայի հաշվառման/բնակության վայրից տեղեկանք,
3. Երեխայի անձնական գործը, եթե նա ընդունվում է առաջին դասարանից բարձր,
4. Ակադեմիական տեղեկանք/ առաջադիմության թերթիկ (առարկանների գնահատականներ),
5. 10-12-րդ դասարաններ ընդունվողներին անհրաժեշտ է հիմնական կրթության վկայականի բնօրինակը,
6. Երեխայի երկու գունավոր լուսանկար (3x4 չափսի),
7. Տեղեկանք (ձև 26) երեխայի առողջական վիճակի մասին տարածքային պոլիկլինիկայից,
8. Հանրային ծառայությունների համարանիշ,
9. Լրացված դիմում-հարցաթերթիկ:

Նշում: Օտար լեզուներով փաստաթղթերը պետք է թարգմանվեն հայերեն և վավերացվեն նոտարական կարգով:

Լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (թեժ գիծ՝ 010-59-96-00):

Հայաստանում բարձրագույն կրթության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք escs.am կամ hesc.am կայքերը:



Հայաստանում աշխատանքի ընդունվելու համար հարկավոր է ունենալ բոլոր դիպլոմներն ու հավաստագրերը: Գործատուները կարող են պահանջել դրանց թարգմանված պատճենները, իսկ միջազգային կազմակերպությունները՝ նաև բնօրինակները: Հայկական ընկերությունները նախընտրում են էլեկտրոնային նամակին կցված ռեզյումեները: Համոզվեք, որ ծանոթ եք այն կազմակերպությանը, որին դիմում եք և բավարարում եք արդյոք ներկայացված պահանջներին: Repat Armenia հիմնադրամը առաջարկում է մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև աջակցություն ռեզյումեների կազմման հարցում:

Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է **75 000 ՀՀ դրամ**: 2025 թ. դրությամբ հանրապետությունում միջին աշխատավարձը կազմում է ավելի քան **250.000 ՀՀ դրամ**:

Գործարկվել է զբաղվածության ոլորտի առաջին պետական հարթակը՝ **e-work.am**-ը, որը կարևոր օղակ է աշխատանք փնտրողների և գործատուների միջև հաղորդակցությունը հեշտացնելու համար:

Աշխատանք գտնելու համար անհրաժեշտ է պարբերաբար հետևել պետական ծրագրերին, ինչպես նաև օգտվել մասնավոր կազմակերպությունների և տարբեր էլեկտրոնային ռեսուրսների հասանելի հնարավորություններից, ինչպիսիք են՝



mlsa.am, Staff.am, Job.am, Careercenter.am, HR.am, Jobfinder.am, Myjob.am

Եթե ակտիվորեն աշխատանք եք փնտրում Հայաստանում, ապա կապվեք նաև **Repat Armenia**-ի հետ անհատականացված աջակցության և **staff.am/repat** բացառիկ հարթակ մուտք գործելու և աշխատաշուկայում ձեր տեսանելիությունն ու մրցունակությունը բարձրացնելու համար:



QR կոդով կարող եք գտնել լրացուցիչ տեղեկատվություն՝

Հարկեր՝

Հարկման համակարգի ժամանակին և ճիշտ ընտրությունը էական է ընկերության գործունեության կազմակերպման և հարկերի պլանավորման համար:

- Հարկային արտոնյալ կարգավիճակից օգտվում են միկրոձեռնարկությունները (վճարում են միայն աշխատակիցների եկամտահարկը), SS ոլորտի կազմակերպությունները (1% շրջանառության հարկ) և ազատ տնտեսական գոտիներում գործող ընկերությունները,

- Ընդհանուր հարկման կարգն այն է, երբ ընկերությունը հարկվում է շահութահարկով՝ 18%-ի չափով և/կամ ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) 20%-ի չափով,

- Շրջանառության հարկ. ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման արդյունքում առաջացող հարկի տեսակ է, որի դրույքաչափերը տատանվում են 1%-ից մինչև 20%: Շրջանառության հարկը ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար փոխարինում է ԱԱՀ-ին և/կամ շահութահարկին, իսկ ԱՀ-ների համար ԱԱՀ-ին: Այս հարկային ռեժիմից կարող են օգտվել մինչև 115 միլիոն դրամ տարեկան շրջանառություն ունեցող բիզնեսները, եթե բավարարում են ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված այլ պահանջներին: Շրջանառության հարկի հաշվետվությունները ներկայացվում են եռամսյակը մեկ:

2025 թ. հունվարի 1-ից վերանայվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով սահմանված շրջանառության հարկի դրույքաչափը (5 տոկոսից դարձել է 10 տոկոս): Շրջանառության հարկ վճարողները առևտրական, արտադրական գործունեության տեսակների մասով հաշվարկված շրջանառության հարկի հետևյալ դրույքաչափերը՝

Արտադրական գործունեության մասով՝ հարկը հաշվարկվում է 7% դրույքաչափով,

Հանրային սննդի գործունեության մասով՝ հարկը հաշվարկվում է 12% դրույքաչափով,

- Միկրոձեռնարկությունները տարեկան 24 միլիոն ՀՀ դրամից պակաս եկամուտ ունեցող բիզնեսներն են, որոնք ազատվում են բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվող առանձին դեպքերի): Նոր գրանցվող/հաշվառվող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը միկրոձեռնարկություն համարվելու հայտարարությունը պետք է ներկայացնեն պետական գրանցման/հաշվառման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը:

ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները (բացառությամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող անձանց) պարտավոր են նախորդ տարվա անձնական եկամտի հայտարարագիրը Պետական եկամուտների կոմիտե ներկայացնել մինչև հաջորդ տարվա հուլիսի 1-ը:

Սոցիալական վճարը կազմում է 5% մինչև 500,000 դրամ աշխատավարձի դեպքում և 10% - հանած 25,000 դրամ՝ 500,000 դրամից բարձր աշխատավարձի դեպքում:

Վարձակալությունից ստացված եկամուտը հարկվում է 10% ֆիքսված դրույքաչափով:



Բիզնես գրանցելը Հայաստանում տևում է ընդամենը 20 րոպե: Գոյություն ունեն իրավաբանական անձանց բազմաթիվ ձևեր, որոնք Դուք՝ որպես ձեռնարկատեր կամ բիզնեսի սեփականատեր, կարող եք գրանցել Հայաստանում: Ընկերության հիմնումից առաջ բիզնեսի իրավաբանական ձևերը ճիշտ ուսումնասիրելը նույնքան կարևոր է, քանի որ իրավաբանական անձի կարգավիճակ ունենալը սահմանում է ձեր ընկերության պարտավորությունները և իրավունքները:

Բիզնեսի/ընկերության գրանցումը ներկայումս իրականացվում է ամբողջությամբ առցանց՝ **e-register.am** կայքի միջոցով:

Հայաստանում իրավաբանական անձանց գրանցման ոլորտում ներդրվել է «մեկ պատուհանի» սկզբունքը: Սա նշանակում է, որ իրավաբանական անձ հիմնելու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար բավարար է դիմել մեկ մարմնի՝ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

 **e-register@moj.am**  +374 10 20 14 48

Տեղեկացեք Հայաստանում ցանկացած տեսակի բիզնես հիմնելու հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի և ծախսերի մասին **armenia.eregulations.org** կայքում:

Հայաստանում բիզնես վարելու հնարավորությունների մասին տեղեկատվություն ստանալու և Ձեր բիզնեսի/ներդրումների վերաբերյալ խորհրդատվություն և առաջարկություններ ստանալու համար այցելեք նաև հետևյալ հղմամբ՝ **enterprisearmenia.am**:

 **onewindow@isc.am**  +374 11 208 105



Որպես անհատ ձեռնարկատեր անհրաժեշտ է ստանալ հարկ վճարողի նույնականացման համար, քանի որ զբաղվելու եք ձեռնարկատիրական գործունեությամբ, ապրանքների կամ ծառայությունների ինքնուրույն և պարբերական վաճառքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



Եթե ցանկանում եք աշխատել Հայաստանում նախքան ՀՀ քաղաքացիություն կամ կացության կարգավիճակ ձեռք բերելը, ապա Ձեզ հարկավոր է ստանալ աշխատանքի թույլտվություն: Ձեր գործատուն պետք է **workpermit.am** էլեկտրոնային համակարգով դիմում կատարի աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

Կապ միզրացիոն ծառայության մասնագետների հետ՝

 **workpermit@gov.am**  (+374 60) 275 021, (+374 60) 275 036:

Բարձր որակավորում ունեցող օտարերկրյա մասնագետները, ձեռնարկատերերը, ղեկավարները, որոշակի ոլորտների մասնագետները, պետական կառավարման ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետները (օրինակ՝ գյուղատնտեսություն, բնական գիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆինանսներ, սննդի տեխնոլոգիա կամ կառավարում), համալսարանի դասախոսները, արտասահմանյան լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչները, փոխանակման ծրագրերով սովորող ուսանողները ազատվում են աշխատանքի թույլտվության պահանջներից:

ԵԱՏՄ քաղաքացիները (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան և Ռուսաստան) նույնպես ազատված են աշխատանքի թույլտվություն ստանալուց, սակայն աշխատանքը սկսելուց առաջ նրանք պետք է գրանցվեն workpermit.am կայքում և վերբեռնեն աշխատանքային պայմանագիրը:

Աշխատանքի թույլտվության տրամադրումից հետո (30 օրվա ընթացքում) անհրաժեշտ է ստանալ Հանրային ծառայությունների համարանիշ և խորհուրդ է տրվում միաժամանակ գրանցվել բնակության հասցեում:

Գործատուն Հայաստանի Հանրապետության միգրացիոն ծառայություն պետք է ներկայացնի իր աշխատակցի հետևյալ փաստաթղթերը (թարգմանված և նոտարական կարգով վավերացված) և իրականացնի վճարում.

- Դիմում,
- Անձնագիր,
- Դիպլոմներ և կրթությունը կամ որակավորումը հաստատող այլ փաստաթղթեր՝ ապոստիլով,
- Երկու լուսանկար (3x4 սմ),
- Պետական տուրքի վճարում (25 000 դրամը պետք է վճարվի Ձեր կամ գործատուի կողմից):

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



Հայաստանում վարձակալության գները որոշվում են ըստ գույքի գտնվելու վայրի, տարածքի, շինության տեսակի, տրամադրվող հարմարությունների, հավելյալ ծառայությունների և տարվա սեզոնայնության: Բնակարանների վարձակալության գները բարձրանում են ամռան ամիսներին, զբոսաշրջային սեզոնի ընթացքում: Վարձով տրվող բնակարանները հիմնականում ամբողջությամբ կահավորված են:

Երևանում գները զգալիորեն բարձր են, հատկապես քաղաքի կենտրոնում, որտեղ մեկ սենյականոց բնակարանների գինը կարող են սկսվել 500 դոլարից: Ընդհանուր առմամբ, որքան հեռու է կենտրոնից, այնքան ցածր է վարձակալության արժեքը:

Ռոտեղից սկսել

Դուք կարող եք սկսել ձեր որոնումը Facebook սոցիալական հարթակում՝ միանալով **Armenian Repatriates Network, Find Flatmates/Roommates in Yerevan** խմբերին: Նշեք ցանկալի բնակարանի գինը, տարածքը, գտնվելու վայրը, և Ձեզ կպատասխանեն:

Կան նաև բազմաթիվ կայքեր անշարժ գույքի գովազդներով և առաջարկներով, որտեղ դուք կարող եք ընտրել կացարան՝ ըստ գտնվելու վայրի, գնի և հարևանության:



www.list.am
www.real-estate.am

www.myrealty.am
www.realtors.am

www.estate.am
www.bnakaran.com

Նշում: Դուք կարող եք բնակարան վարձել անմիջապես տանտիրոջից կամ բրոքերի միջոցով: Ցանկալի է ունենալ նոտարական կարգով վավերացված վարձակալության պայմանագիր անշարժ գույքի սեփականատիրոջ կամ բրոքերային ընկերության հետ: Եթե Դուք չեք ցանկանում միջնորդավճար վճարել բրոքերին, փորձեք բնակարան գտնել անմիջապես տանտիրոջ միջոցով: Այն բանից հետո, երբ Դուք վարձակալել եք գույքը և ցանկանում եք որևէ վերանորոգում կամ ներդրում կատարել այդ վայրում, համոզվեք, որ նախապես համաձայնեցրել եք Ձեր ծախսերն ու վճարումները սեփականատիրոջ հետ:

ՀԱՎԵԼՈՒՄ: Այս կայքերում առկա հայտարարությունները կարող են կրկնվել, քանի որ գործակալները վերահրապարակում են հայտարարությունները: Գործակալները հիմնականում ստանում են միջնորդավճար (սովորաբար առաջին ամսավճարի 10%-ի չափով) և՛ վարձատուի, և՛ վարձակալի կողմից: Պատրաստ եղեք վճարել վարձակալության առաջին և վերջին ամիսների համար, ինչպես նաև միջնորդավճար 10%-ի չափով: Եթե ցանկանում եք շրջանցել գործակալի միջնորդավճարը, փնտրեք առանց միջնորդի հրապարակված տարբերակներ:

ԿՈՄՈՒՆԱԼ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԶՁԱՅԻՆ ԿԱՊ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ

Կոմունալ վճարումներ

Կոմունալ վճարները (գազ, էլեկտրականություն, ջուր և այլն) հասանելի են առցանց՝ սկսած յուրաքանչյուր ամսվա 10-ից հետո և պետք է վճարվեն մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը: Վճարումները սովորաբար կատարվում են առցանց եղանակով տարբեր բջջային հավելվածների միջոցով, որոնց կարող եք կցել ձեր բանկային հաշիվը կամ կարող եք վճարում կատարել վճարային տերմինալների միջոցով: Վճարումը սովորաբար կատարվում է հաճախորդի համարանիշի կամ հեռախոսահամարի միջոցով, որով ակտիվացված է ծառայությունը:

Բջջային վճարման հավելվածներ՝ idram, Mobidram, TellCellWallet, EasyWallet, ArCa:

Նշում: Շատ շենքերում ջեռուցման համակարգերը ապակենտրոնացված են, ինչը կարող է հանգեցնել էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի տարբերությունների: Կոմունալ վճարների չափը (մասնավորապես՝ ջեռուցման և օդափոխության համար) կախված է բնակելի շենքի տեսակից:

Բջջային և ինտերնետ ծառայություններ մատուցողի ընտրություն

Հայաստանում բջջային կապի երեք հիմնական օպերատոր կա՝ **Ucom, Viva և Team Telecom**: Երեք ընկերություններն էլ ընդհանուր առմամբ լավ ծածկույթ ունեն Երևանում և ամբողջ Հայաստանում:

Դուք կունենաք 2 տարբերակ՝ ամսական սակագնային պլան կամ վճարովի ծառայություններ: Սակագնային պլանները կարող են տատանվել 2000 դրամից մինչև 9500 դրամ միջակայքում՝ կախված Ձեր ընտրած ծառայություններից:

Տնային ինտերնետը հասանելի է Ucom, Team Telecom, Ovio և այլ ընկերությունների միջոցով: Բոլորն առաջարկում են ինտերնետ/բջջային կապ/հեռուստատեսություն ծառայությունների համադրությամբ փաթեթներ, որոնց արժեքը 6000-12000 դրամ է: Եթե պատրաստվում եք վարձակալել անշարժ գույք, եղեք ուշադիր, և եթե տարածքում կան ինտերնետ և հեռուստակապ, Դուք պարտավորված կլինեք յուրաքանչյուր ամիս վճարել դրանց համար: Ծառայությունը գնելիս ձեզ հետ պետք է բերեք անձնագիր (ընդունվում են նաև արտասահմանյան անձնագրեր) կամ նույնականացման քարտ:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆԱՍՆԵՐ



Բանկային հաշվի բացում

Անձնական բանկային հաշիվները հիմնականում օգտագործվում են աշխատավարձ, պետական նպաստներ, կենսաթոշակ ստանալու և կոմունալ վճարումներ կատարելու համար: Բջջային և ինտերնետ բանկինգը շատ տարածված է կոմունալ ծառայությունների, հատկապես հեռախոսային և ինտերնետային ծառայությունների համար վճարումներ կատարելիս:

Որպես ՀՀ քաղաքացի կամ ռեզիդենտ բանկային հաշիվ բացելիս Ձեզ հարկավոր է.

- Ձեր ՀՀ / արտասահմանյան անձնագիրը,
- Հանրային ծառայությունների համարանիշը,
- Գրանցման հասցեն:

Նշում: ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիները կարող են բացել բանկային հաշիվներ՝ Հայաստանում իրենց մշտական բնակությունը հաստատող փաստաթղթերի լրացուցիչ փաթեթով: Անպայման ստուգեք Հայաստանի և այն երկրի բանկային քաղաքականության համապատասխանությունը, որի քաղաքացիներ եք հանդիսանում:

Երկրի բանկերի և ֆինանսական համակարգի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն կարող եք գտնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում՝ **cba.am**:

ՀՀ-ում գործող բոլոր բանկերն ունեն մասնաճյուղերի լայն ցանց, որտեղ Դուք կարող եք հերթագրվել առօրյա գործարքների համար:

Նշում: Արտարժույթի փոխարժեքները կարող եք ստուգել հետևյալ հասցեով՝



Հավելում: Ի տարբերություն քաղաքի ծայրամասերում կամ փոքր փողոցներում գտնվող բանկերի՝ Երևանի կենտրոնում գործող բանկերը մշտապես ծանրաբեռնված են: Ընդմիջման ժամերին և աշխատանքային օրվա ավարտին բանկերում գոյանում են մեծ հերթեր: Խորհուրդ ենք տալիս օգտագործել **Earlyone** հավելվածը, հերթերից խուսափելու և նախապես ժամ ամրագրելու համար:

Տեղափոխեք ձեր ֆինանսական ակտիվները:

Օդային կամ ցամաքային տրանսպորտով Հայաստան ժամանելիս Ձեզ հետ կարող եք վերցնել մինչև 10 000 ԱՄՆ դոլար: Եթե Դուք ԵԱՏՄ չհանդիսացող երկրից 10,000 ԱՄՆ դոլար և ավելի կանխիկ գումարով (կամ համարժեք այլ արժույթով) տեղափոխվում եք Հայաստան, ապա պարտավոր եք այն հայտարարագրել: Կանխիկը ներառում է նաև ճանապարհորդների անդորրագրերը:

Խորհուրդ: 10 000 ԱՄՆ դոլարից ավել գումարը (կամ համարժեք այլ արժույթով) խորհուրդ է տրվում միջազգային SWIFT փոխանցման միջոցով բանկային հաշվին փոխանցել կամ կատարել արագ բանկային փոխանցումներ MoneyGram և Unistream համակարգերի միջոցով:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ



Եթե ցանկանում եք մեքենա վարել Հայաստանում և ունեք միջազգային վարորդական վկայական կամ ժամանել եք Վիեննայի կոնվենցիայի անդամ երկրից (օրինակ՝ Ռուսաստանից, Վրաստանից և Միացյալ Թագավորությունից), ապա կարող եք նույն վկայականով մեքենա վարել Հայաստանում: Հակառակ դեպքում՝ պետք է դիմել ՀՀ վարորդական իրավունք ստանալու համար: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալուց հետո Դուք պետք է փոխանակեք Ձեր օտարերկրյա վարորդական իրավունքը հայկականով կամ հանձնեք տեղական վարորդական իրավունքի քննություն:

Նշում: Վիեննայի կոնվենցիայի մասնակից երկրների ամբողջական ցանկին կարելի է ծանոթանալ ՀՀ արտաքին գործերի նախարարության կայքի (mfa.am) «Հյուպատոսական ծառայություններ և վիզաներ» բաժնում:

Վարորդական վկայականի քննություններ հանձնելու համար անհրաժեշտ է գրանցվել առցանց՝ լրացնելով կայքում տեղադրված հայտը (roadpolice.am), որից հետո Դուք կստանաք հաղորդագրություն կամ զանգ քննության վայրի և ժամի վերաբերյալ: Եթե գրավոր քննության ավարտին Դուք ստանաք անցողիկ զնահատական, կարող եք դիմել գործնական քննության համար՝ քաղաքային պայմաններում՝ վարելով ավտոմեքենան: Հայաստանում վարորդական քննության տեսության թեստերը հասանելի են նաև ռուսերենով, անգլերենով, արաբերենով և պարսկերենով:

Անհրաժեշտ են՝

Անձնագիր կամ նույնականացման քարտ և գրանցման հասցե,
Տեսական քննության արժեքի վճարում - 3000 դրամ,
Գործնական քննության արժեքի վճարում - 13 000 դրամ,
Վարորդական իրավունքի արժեքի վճարում -12 000 դրամ:

Վարորդական իրավունք ստանալու նվազագույն տարիքը 18 տարեկանն է: Մեքենա վարելու, թեստերի փորձարկման նմուշների, վիդեո դասընթացների և այլնի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք varord.am կայք:

Վարորդական իրավունքի փոխանակում

Վիեննայի կոնվենցիայի մասնակից երկրների վարորդական իրավունքի փոխանակման դիմումը կարող է լրացվել ճանապարհային ոստիկանությունում՝ առանց հերթի: Հայտի քննարկման ժամկետը 2 ամիս է:

Եթե Դուք հանդիսանում եք Վիեննայի կոնվենցիայի անդամ երկրի քաղաքացի, ունեք նաև ՀՀ քաղաքացիություն, ապա, որպես երկքաղաքացի, կարող եք առանց քննություններ հանձնելու ստանալ նաև ՀՀ ազգային վարորդական վկայական:

Հասարակական տրանսպորտի ծառայություններ

Հասարակական տրանսպորտի ծառայությունները ներառում են՝




ավտոբուսներ, երթուղային տաքսիներ, մետրո (միայն Երևանում), գնացքներ և տրոլեյբուսներ երկրի տարբեր մասերում:

Գործում է **տրանսպորտի ուղեվարձի վճարման միասնական համակարգ (բազմակի օգտագործման տոմս)**: Երևանում հասարակական տրանսպորտի ուղեվարձը 2025 թվականի դրությամբ՝ 150 դրամ է (մետրո, ավտոբուս, տրոլեյբուս):

Տաքսիով երթևեկության համար բջջային հավելվածներ ունեն **GG-ն, Utaxi-ն, Yandex-ը** և այլք:

ԿԵՑՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ

Հայրենադարձներին հաճախ հետաքրքրում է, թե որքան են կազմում Հայաստանում կեցույթյան ծախսերը աշխատավարձի չափի համեմատությամբ: Մենք կազմել ենք անհատական և ընտանեկան կարգավիճակների վրա հիմնված տարբեր բյուջեների ցուցակներ, որպեսզի օգնենք հայրենադարձներին պատկերացնել իրենց սպասվելիք ծախսային մոտավոր բյուջեն: Յուրաքանչյուր անհատի և ընտանիքի կեցույթյան ծախսը տատանվում է կախված նրանց անձնական կարիքներից և ծախսումներ կատարելու սովորություններից: Այս գնահատականները հիմնված են հայրենադարձների և օտարերկրացիների կողմից իրականացված ծախսերի և 2025 թվականի շուկայական գների վրա:

ԱՄՍԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ԱՄՆ դոլար)	ՄԻԱՅՆԱԿ 	ԶՈՒՅԳ 	ԸՆՏԱՆԻՔ 
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ (ՅՈՍԱՆՔ/ ԳԱՁ/ ԶՈՒՐ/ ԳՍՄԱՅԱՆՅ/ ԲԶԶԱՅԻՆ ԿԱՊ)	\$350-800 \$40-70	\$450-900 \$50-100	\$700-1200 \$80-200
ՄՆՈՒՆԴ (ԽԱՆՈՒԹՆԵՐ, ՄՆՆԴԻ ԿԵՏԵՐ)	\$150-250	\$250-350	\$300-400
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏՐՈ/ ԱՎՏՈՐՈՒՄ/ ՏԱՔՍԻ/ ՄԵՔԵՆԱ)	\$20-50	\$50-100	\$80-150
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (ԲԺՇԿԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ/ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1 ԱՆՁԻ ՀԱՄԱՐ)	\$10-40	\$20-80	\$30-120
ԱՊՐԵԼԱԿԵՐՊ	\$100-300	\$200-500	\$300-600

Նշում: Այստեղ հաշվարկված կեցույթյան ծախսը հիմնված է Երևան քաղաքում առկա գների վրա: Վարձակալության և բնակարանների գները սովորաբար ավելի էժան են մարզային քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին և Վանաձորը:

Դուք կարող եք նախապես հաշվարկել ձեր ծախսերը numbeo.com կայքի միջոցով:

ՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Ստորև ներկայացված է հայրենադարձության գործընթացի հետ հնարավոր պետական վճարների և տուրքերի աղյուսակը:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ

Քաղաքացիություն ստանալու դիմում _____ 1,000 դրամ (01.09.2025թ.-ից պետական տուրքը կկազմի 50,000 դրամ)	
Սովորական անձնագիր _____	1,000 դրամ
Կենսաչափական անձնագիր _____	25,000 դրամ
Նույնականացման քարտ _____	3,000 դրամ
Գրանցման հասցե _____	1,000 դրամ
Անձնագրի կամ նույնականացման քարտի արագացված տրամադրում	
հաջորդ աշխատանքային օրը _____	20,000 դրամ
3 աշխատանքային օր _____	10,000 դրամ
5 աշխատանքային օր _____	5,000 դրամ
Ժամանակավոր կացության կարգավիճակ, քարտ և գրանցում _____	105,000 դրամ
Մշտական կացության կարգավիճակ, քարտ և գրանցում _____	140,000 դրամ
Հատուկ կացության կարգավիճակ, հատուկ անձնագիր և գրանցում _____	150,000 դրամ
Ժամանակավոր կացության կարգավիճակի երկարաձգում _____	105,000 դրամ
Մշտական կացության քարտի փոփոխում _____	20,000 դրամ
Մշտական կամ ժամանակավոր կացության քարտի վերականգնում _____	12,000 դրամ
Նոր հատուկ անձնագրի թողարկում կորցնելու դեպքում _____	75,000 դրամ
Տուրիստական վիզայի ուշացման տուգանք _____	50,000 դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք  diaspora.gov.am



Հրշեջ ծառայություն _____	101
Ոստիկանություն _____	102
Շտապ բուժօգնություն _____	103
Գազի վթարային ծառայություն _____	104
Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոն _____	911/112
Երևանի քաղաքապետարանի թեժ գիծ _____	105
Երևանի քաղաքային ճգնաժամային կառավարման կենտրոն _____	108
ՍՓՅՈՒՌ տեղեկատվական համակարգ _____	113
Ճանապարհային ոստիկանություն _____	177
Երկաթուղային կայարանի տեղեկատվական ծառայություն _____	184
Զվարթնոց օդանավակայանի տեղեկատվական ծառայություն _____	187
Առողջապահության նախարարության թեժ գիծ _____	8003



diaspora.gov.am
@DiasporaGovAm

